ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՆԿԱՐԸ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ*

Դժվար է հիշատակել մեկ այլ նկարչի,
ով լինի այն աստիճան զուսպ, ժլատ,
անմիջական և անկեղծ բնության գույները վերցնելիս [1]:

Գաբրիել Գյուրջյան

Մարի Աբրահամյան

Բանալի բառեր՝ բնանկար, մուգ երփնագիր, տարածական պատկերներ, կարմրաշագանակագույն, նրբերանգ, բազմերանգ համադրումներ, գունահյուսվածք:

Ստեփան Աղաջանյանը (1863 - 1940) 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի հայկական ռեալիստական գեղանկարչության կարկառուն ներկայացուցիչներից է: Նրա ստեղծած մեծարժեք դիմանկարների կողքին իրենց ուրույն տեղն են գրավում նաև բնանկարները:

Մեր հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել Ստեփան Աղաջանյանի ստեղծագործական բոլոր շրջանները ներառող բնանկարները, որոնք թույլ են տալիս գաղափար կազմելու ռեալիստ արվեստագետի՝ բնության պատկերման յուրովի մոտեցման վերաբերյալ:

Ըստ արվեստաբան Եղիշե Մարտիկյանի՝ Ս. Աղաջանյանի երևան գալը հայկական արվեստում ամրապնդեց ու իր ավարտմանը հասցրեց բնությունը գեղանկարչական ճշմարտացիությամբ պատկերելու մեթոդը [2]:

Լինելով դիմանկարի վարպետ՝ Աղաջանյանի բնանկարները զարմացնում են նուրբ ու մեղմ գույների սակավ նրբերանգներով: Ինչպես վրձինը ձեռքին ժամերով նկարակալի առջև ուսումնասիրել է իր հերոսին, այնպես էլ դանդաղ ու համառորեն նա դիտել ու վերարտադրել է բնությունը:

Ս. Աղաջանյանից մեզ հայտնի առաջին բնանկարները վերագրվում են 1897-1899 թվականներին, երբ նա ուսանում էր Փարիզի Ժուլիենի ակադեմիայում [3]: Այդ ժամանակահատվածի մասին արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը գրում է. «Նա ակադեմիայից դուրս ազատ աշխատանքներ էր կատարում, ներկատուփն ուսին ման էր գալիս Փարիզի կանաչազարդ պարկերում, Բուլոնյի նկարչագեղ անտառում, հասնում էր քաղաքի շրջակայքը և էտյուդներ անում: Փարիզում աշխատած կովկասահայ նկարիչներից նա առաջինն էր, որ գնաց Բրետանի գեղատեսիլ, բայց խստաշունչ ափերը (1897-1899) ծովի տեսարաններ նկարելու» [4]:

Ս. Աղաջանյանի Բրետանի բնապատկերներից երկու աշխատանք այժմ պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում. «Ծովափնյա տեսարան, Բրետան» (1897-1899) և «Բուլոնյան անտառ» (1897-1899) կտավները:

ՀԽՍՀ վաստակավոր գեղանկարիչ Էդվարդ Սարգսյանը «Աղաջանյանի հետ» իր հոդվածում վկայում է, որ Ս. Աղաջանյանը Ֆրանսիայում ուսանելու տարիներին Բրետանի բնապատկարների մի ամբողջ շարք է ստեղծել, որոնցից որոշ աշխատանքներ

---

* Հոդվածն ընդունվել է 02.02.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Ասատրյանը: 02.02.21:

են հասել մեզ [5]:

Նկարչի ստեղծագործության վաղ շրջանին պատկանող գործերում նկատելի են երիտասարդական, երազկոտ տրամադրությունները:

«Ծովափնյա տեսարան, Բրետան» (1897-1899) աշխատանքում ներկայանում է ալեկոծ ծովի ամպամած տեսարան: Կանաչի, դեղինի, մուգ շագանակագույնի ազատ ու վստահ քսվածքներով առանձնանում են Բրետանի քարքարոտ ափերը, որոնց եզերքին առավել տեսանելի են ծովի ալեկոծ մասերը: Նկարչին հաջողվել է հաղորդել բնության լիրիկական տրամադրություն: Այն դիտողին մղում է մենության, տխրության, ինքն իր մեջ խորասուզվելու ցանկության:

Այս աշխատանքին համահունչ տրամադրությամբ, ամբողջությամբ մուգ տոնայնությամբ է արված «Բուլոնյան անտառ» (1897-1899) բնանկարը: Իրիկնամուտի թույլ լույսը տեսանելի է դարձրել դեպի վեր ձգվող ծառերի՝ իրար մեջ մխրճված ճյուղերը, հազիվհազ երևացող երկինքը: Բնանկարը հանդես է գալիս դեղինի, կանաչի, կապույտի, մուգ շագանակագույնի պինդ ու խիտ քսվածքներով, որոնց ազդեցությամբ ստեղծված մթությունը՝ առկայծող կարմիր ու դեղին բծերով, խորհրդավորություն և տոնական տեսք են հաղորդում:

Թեև այսպիսի զգացմունքայնությամբ կատարված էտյուդները Ս. Աղաջանյանի մոտ քիչ են, սակայն մեկը մյուսին նման չեն ո՛չ գույնով և ո՛չ էլ կատարողական եղանակով:

Գեղատեսիլ Բրետանի պատկերմանը անդրադարձել են նաև հայ նշանավոր գեղանկարիչներ Եղիշե Թադևոսյանը (1870-1936), Փանոս Թերլեմեզյանը (1865-1941), Գրիգոր Շարբաբչյանը (1884-1942) և այլք:

Եթե Եղիշե Թադևոսյանի բրետանյան բնանկարներին բնորոշ են իմպրեսիոնիստական թեթև վրձնախաղերը՝ բազմերանգ համադրումներով («Բրետան», 1901), ապա Գրիգոր Շարբաբչյանի աշխատանքները առանձնանում են գունային արտահայտիչ զուգորդումներով, նկատելի նյութականությամբ, լուսառատ կտավով մեկ անկաշկանդ, թեթև վրձնախաղերով, որոնք վառ արտահայտված են 1931-ին ստեղծված «Բրետան» աշխատանքում:

Միանգամայն այլ երանգային նկարագիր ունեն Թերլեմեզյանի Բրետան պատկերող կտավները, որոնք հանդես են գալիս երփնագրում ներդաշնակ, մեղմ երանգների ընտրությամբ և ջրի մակերևույթին լուսափայլ, եթերային տպավորության փոխանցմամբ:

Ս. Աղաջանյանի բրետանյան էտյուդները, որոնք պատկանում են նկարչի ակադեմիական շրջանին, աչքի են ընկնում երփնագրի մուգ կոլորիտով, վրձնահարվածների պինդ ու շեշտված քսվածքներով, բնության տեսարանների իրատեսական պատկերմամբ:

Արվեստաբան Ռուբեն Դրամբյանի համոզմամբ. «Աղաջանյանի բնանկարները մոտ են բարբիզոնցիներին [6] և Կուրբեին [7]», որոնց Աղաջանյանը ծանոթ էր դեռևս Ժուլիենի ակադեմիայում ուսանելու տարիներից [8]:

«Աղաջանյանի համակրանքը Կուրբեի և բարբիզոնյան դպրոցի կողմն էր. նա ընտրեց ռեալիստական արվեստը»[9], ապրելով 20-րդ դարասկզբի Փարիզում՝ երկիր, որտեղ ծնունդ էին առնում գեղանկարչական մի շարք ուղղություններ, որոնց Աղաջանյանը իր ստեղծագործական կյանքի ընթացքում անհաղորդ մնաց, փոխարենը մշտապես պահպանեց դասական արվեստի ավանդույթները:

Թեև Կուրբեի ստեղծագործական թեմատիկան և կոլորիտային ընտրությունը բազմազան է, սակայն նրա՝ մուգ տոնայնությամբ աշխատանքները [10], ընդգծված ծավալայնությամբ, նյութականությամբ, համեմատելի են Ս. Աղաջանյանի աշխատանքներին: Հատկանշական է, որ Ս. Աղաջանյանի ստեղծագործություններում մուգ երփնագիրը և սիրված շագանակագույնը պահպանվում են նաև նկարչի ռոստովյան բնան-

կարներում:

Բնության բազմատարր ու հետաքրքրական հատվածների պատկերման հարուստ երփնագրությամբ, «աչքի ընկնող նյութականությամբ» առանձնանում է Ս. Աղաջանյանի «Ղարաբաղյան տեսարան» էտյուդը՝ ստեղծված 1900 թվականին [11]:

Մեր առջև Շուշիի գեղատեսիլ բնաշխարհն է: Կիսաքանդ պարսպի ետնամասից բարձրացող դեղնատերև ծառը ազդարարում է Շուշվա արևառատ աշունը: Բնապատկերի երփնագրում առավել տաք ու ջերմ երանգների և շագանակագույնի նուրբ զուգորդումները՝ վրձնահարվածների ազատ ու անկաշկանդ քսվածքներով, թարմ ու հյութեղ տպավորություն են հաղորդում աշխատանքին:

Ստեղծագործության կոմպոզիցիայում տների ձևակառուցվածքային ճշգրիտ մեկնաբանումը, տանիքների միագույն նրբաճաշակությունը բացահայտում է նկարչի արվեստի ռեալիստական էությունը:

Եթե Շուշիում ստեղծած բնանկարները պլեներում աշխատելու հետևանքով աստիճանաբար ազատվում էին շագանակագույնից, ապա ռոստովյան գործերում նկատվում է նորից վերադարձ դրան, սակայն, ըստ Եղիշե Մարտիկյանի, դա չի հասնում միօրինակության, այլ հարստացվում է լրացուցիչ երանգներով, գույնը նոր որակ է ստանում՝ դառնալով նյութի ռեալ արտահայտման միջոց [12]:

Դոնի Ռոստովում բնակություն հաստատելու սկզբնական շրջանում նկարչի ստեղծագործության թեման կրկին բնանկարն է: Այս ժամանակահատվածում ստեղծվում են Տագանրոգում պատկերված «Լքված դարբնոց» (1904), «Դոն» (1915-1916), «-Դոն գետը նկարչի արվեստանոցից» (1915-1916) աշխատանքները, որոնց վերաբերյալ հիշատակում է Ե. Մարտիկյանը [13]:

Դոնիռոստովյան շրջանի հաջողված բնապատկերներից է Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող «Կտուրներ. Նոր Նախիջևան» բնանկարը: Այս աշխատանքի թվագրման հետ կապված՝ նկատում ենք, որ աղբյուրներից մեկում շրջանառվում է 1914 թվականը [14], իսկ մյուսում՝ 1912-1916 թվականները [15]:

Կտավում ներկայացված է Նոր Նախիջևանի լուսառատ կտուրների տեսարան: Նկարիչը այն պատկերել է բարձր դիտակետից՝ ինտենսիվ լույսի ազդեցությամբ ցուցադրելով տանիքների և վարդագույն ծխնելույզների գծագրված կառուցվածքը: Այս աշխատանքում լուսաստվերային փոխանցումները փափուկ են, մեղմ երանգները պատկերին հաղորդել են ծավալ և նյութականություն:

Նկարչի էսենդուկիում ստեղծված գործերը Հայաստանի ազգային պատկերասրահում կրում են «Բնանկար տներով» (1916-1917), «Տնակ ագարակով» (1916-1917) անվանումները: Համաձայն Հայաստանի ազգային պատկերասրահի տվյալների՝ վերջիններս վերագրվում են 1916-1917 թվականներին [16], մինչդեռ կատալոգներում հանդիպում ենք 1916 [17] և 1921 [18] թվագրմանը: Այս բնապատկերները հանդես են գալիս ակադեմիական շրջանին բնորոշ մուգ տոնայնությամբ, լույսի ու ստվերի նուրբ համադրումներով:

Հայաստանի ազգային պատկերասրահում է նաև պահվում Ս. Աղաջանյանի «Տներ կոնդ» (անթվակիր) կտավը: Կոլորիտի ընտրությունը համահունչ է տների անմարդաբնակ լինելուն, որտեղ միակողմ լույսը տարանջատել է ստվերը՝ ավելի դիպուկ ու ազդեցիկ դարձնելով շինությունների լքված վիճակը: Նկարչին հաջողվել է վրձնի պինդ ու խիտ քսվածքներով հաղորդել պատկերի ամրակուռ ձևեր: Բնապատկերն իրատեսական է՝ նյութականությունը արտահայտելու հստակ ու ինքնատիպ կերտվածքով:

1921-ին Ս. Աղաջանյանը մշտապես հաստատվում է Երևանում: Սկսվում են նկարչի կյանքի բեղմնավոր տարիները, ստեղծվում են նոր կտավներ՝ նոր ասելիքով: Ս. Աղաջանյանի գործերում նկատելի կերպով ակտիվանում է լույսի օգտագործումը, բնանկարները դառնում են բավականին լուսառատ:

Երևանում Ս. Աղաջանյանի ստեղծագործական ուղին սկսվում է բնանկարով: 1922 թվականին ստեղծված «Հին Երևան. Ձմեռ» անվանումով կտավը պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Բնապատկերը ներկայացնում է երևանյան ձմեռային տեսարան՝ աղյուսե տների անկանոն ու խիտ դասավորվածությամբ: Բնապատկերը աչքի է ընկնում գունային մեղմ ու ներդաշնակ կոլորիտի հմուտ ընդհանրացումներով:

Այլ է տպավորությունը Երևան քաղաքի պատմության թանգարանում պահվող, 1927-ին կերտված «Ձմեռային բնանկարը»: Ի տարբերություն նախորդ աշխատանքի՝ այս կտավը արված է առավել բաց երանգների մեջ: Բնապատկերը վերագրվում է 1930-ական թվականներին [19], մինչդեռ ստեղծվել է 1927-ին [20]: Ս. Աղաջանյանը Կոնդի իր բնակարանից պատկերել է Հին Երևանի թաղամասի ձյունածածկ տեսարանը: Նկարչին հաջողվել է ցուցադրել մռայլ երկինքը և տանիքների վրա մաղված սառնամանիքի ցուրտ շունչը: Համակարծիք ենք Ռաֆայել Շիշմանյանի այն մտքին, որ «Ձմեռային բնանկար» աշխատանքը կարելի է դասել նկարչի բնանկարչական լավագույն աշխատանքների շարքին [21]:

Իրենց լիրիկական շեշտադրությամբ, գեղանկարչական խոր լուծումներով, մեղմ երանգների զուգորդմամբ առանձնանում են Ս. Աղաջանյանի «Ամպամած օր. Գարուն» (1923) և 1928-ին ստեղծված «Բնանկար ծառերով» բնապատկերները, որոնցից վերջինս կրում է նաև «Գարնանային բնանկար» [22], «Գարուն» [23] անվանումները: Գունային հագեցվածությունը, փոխանցվող երանգների արտահայտչականությունը այդ բնանկարները դարձրել են գեղարվեստական արժեքավոր գործ՝ ցույց տալով այն նոր նվաճումը, որ Ս. Աղաջանյանը ձեռք է բերել այս ժանրում:

Հատկանշական է, որ Ս. Աղաջանյանի ամենալուսառատ բնանկարները գույնի և լույսի այնպիսի առավելության չեն հասնում, ինչպիսին կարելի է տեսնել Ս. Աղաջանյանի հետ նույն ժամանակահատվածում ստեղծագործող Սեդրակ Առաքելյանի (1884-1942), Գաբրիել Գյուրջյանի (1892-1987) բնանկարներում:

Ս. Աղաջանյանի «Երևանյան բնանկար» կոչվող աշխատանքը աչքի է ընկնում չափերի մեծությամբ և գտնվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում: Ռ. Շիշմանյանի «Բնանկարն ու հայ նկարիչները» գրքում այս աշխատանքը հիշատակվում է նաև «Հին և Նոր Երևանը» վերնագրով [24]: Կտավի թվագրման հետ կապված՝ նկատում ենք անճշտություն: Որոշ աղբյուրներում նշվում է 1925 [25] թվականը, հանդիպում ենք նաև 1935 [26] թվագրմանը: Մինչդեռ Երևան քաղաքի պատմության թանգարանի 2008–ին հրատարակված «Երևանը բնապատկերներում» վերտառությամբ կերպարվեստի հավաքածուում հիշատակվում է 1930-ական թվականները և կրում է «Տեսարան Երևանից» վերնագիրը [27]: Տեղանքի պատկերումը հասցված է դետալային, մանրազննին մշակման: Աշխատանքում գերիշխում են դեղնա-օքրայի, շագանակագույնի, տեղ-տեղ՝ թույլ կապտավուն երանգները: Նույնատիպ պատկերման հանդիպում ենք նույն թանգարանում պահվող Սեդրակ Առաքելյանի «Ուսանողական թաղամաս» (անթվակիր) և Գաբրիել Գյուրջյանի նույնանուն (1936) աշխատանքներում: Ի տարբերություն Ս. Աղաջանյանի՝ նրանց բնանկարները աչքի են ընկնում թարմ ու վառ գույներով: Այստեղ հանդիպում ենք գունային այլ մտածողության՝ լուսափայլ երանգներ, աննշան ստվերային անցումներ, պատկերները՝ թույլ ընդգծված:

Հարկ է նկատել, որ Ս. Աղաջանյանի բնանկարչական ժառանգության այս և այլ գործերում արվեստագետը հատուկ ուշադրության է արժանացրել ճարտարապետական շինությունների վերարտադրմանը՝ որոշ դեպքերում այն ենթարկելով ռեալիստական, մանրազննին պատկերման, վավերագրական ճշգրտությամբ փոխանցելով ճարտարապետական ձևերը:

Ս. Աղաջանյանի արվեստին բնորոշ բնության պատկերման իրատեսական պատկերաոճով է հանդես գալիս «Մուտք դեպի նկարչի արվեստանոց» (1926) բնանկարը,

որը նաև կրում է «Իմ բակը», «Աշնանային բնանկար», «Աշունը Երևանում» կամ պարզապես «Աշունը» անվանումները [28]: Նույն ազդեցությամբ են ստեղծվել 1929 և 1930 թվականների «Իմ բակը» անվանմամբ երկու աշխատանքները, որոնցից առաջինը, համաձայն 1938-ին հրատարակված կատալոգի, համարվում է Հայպետհրատի սեփականությունը [29]: ***Այս բնանկարներում ևս գունային անցումները ներդաշնակ են, հանդարտ ու նրբին՝ շաղկապված*** *կանաչի, մուգ շագանակագույնի, վարդագույնի* ***մեղմ փոխանցումներով:***

Ս. Աղաջանյանի ռեալ և անմիջական մոտեցումը դեպի բնությունը իր արտահայտությունն է գտել նաև Արարատը պատկերող աշխատանքներում: Ուշադրության է արժանի նկարչի՝ 1923 թվականին ստեղծված «Երևանը Արարատի ֆոնին» բնապատկերը: Հստակ ու պարզ ձևերի հերթագայությամբ պատկերված են շինությունների, ճանապարհների բանուկ մասերի կառուցվածքը: Գունային տաք համադրումները հետզհետե նոսրանում են, և տեսանելի է դառնում Արարատ լեռան ուրվագիծը: Աշխատանքն ակնհայտորեն աչքի է ընկնում գունային անցումների նուրբ ընդհանրացումներով և գեղանկարչական համոզիչ լուծումներով:

Արարատ լեռան մեկ այլ պատկեր է ներկայացնում նկարչի՝ «Երևանը Արարատի ֆոնին՝ գարնանը» (անթվակիր) աշխատանքը: Քաղաքի կիսաքանդ պարիսպի և շինությունների պատկերմամբ Արարատի բարձր ֆոնին տեսանելի են բարդու ու գմբեթավոր եկեղեցու վերարտադրումները: Համատարած կանաչի, վարդագույնի, դեղինի մեղմ երանգները միահյուսվել են Ս. Աղաջանյանին բնորոշ շագանակագույնի նուրբ ելևէջներին:

19-20-րդ դարերի հայ գեղանկարիչներից [30] շատերն իրենց ստեղծագործական կյանքի ընթացքում անդրադարձել են բիբլիական Արարատի պատկերմանը: Ս. Աղաջանյանի ժամանակակից արվեստագետների գործերից հատկանշական են Փանոս Թերլեմեզյանի Արարատը պատկերող աշխատանքները: Ըստ արվեստաբան Մերի Կիրակոսյանի՝ եթե Ստեփան Աղաջանյանի Արարատի տեսարաններն աչքի են ընկնում լեռան և շրջապատող միջավայրի մանրամասն, ինչ-որ տեղ դետալային վերարտադրմամբ, ապա Թերլեմեզյանի լեռան պատկերներն ավելի ընդհանրական են, որոշ դեպքերում՝ էտյուդային [31]:

Ս. Աղաջանյանի վրձնին է պատկանում Արարատ լեռան վերարտադրմամբ, բաց ու լուսավոր համադրումներով, 1927-ին ստեղծված «Արարատը և Արարատյան դաշտը» բնապատկերը: Այս աշխատանքի թվագրման վերաբերյալ հանդիպում ենք որոշակի անհամաձայնության. Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող այս աշխատանքը թվագրվում է 1934 թվականով [32], մինչդեռ բնանկարը նկարիչը ստեղծել է 1927 թվականին [33]:

Կտավում պատկերված է Արարատյան դաշտավայրը: Արարատի վերարտադրումը տրված է «այնպիսի անտվոր ծավալայնությամբ, որ թվում է, թե դիտողի և լեռան միջև օդային տարածություն չի մնացել» [34]: Այս աշխատանքում նյութականությունը արտահայտելու նկարչի կարողությունը բացառիկ ուժի է հասնում: Կարծես՝ Արարատի այսպիսի մեկնաբանման նպատակը լեռան հսկայածավալ զանգվածը շոշափելի և արտահայտիչ դարձնելն է: Լեռան վերարտադրումն աչքի է ընկնում գունային հստակ համադրումներով և պատկերային ձևերի հմուտ մշակվածությամբ: Նկարիչն իր ստեղծագործական մտքի շեշտը դրել է նյութականության՝ առարկաների անփոփոխ ձևերի վրա, նա կարծես քանդակել է տարածությունը:

Թեև Ստեփան Աղաջանյանը հայ կերպարվեստի պատմության էջերում առաջնահերթ նշանավորվեց որպես հայ ռեալիստական երփնագրության հոգեբանական դիմանկարի լավագույն վարպետ, այդուհանդերձ նրա կերտած բնանկարները իրենց ուրույն տեղն են գրավում հայ դասական բնանկարիչների աշխատանքների կողքին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Գյուրջյան Գ.,** Ռեալիստ արվեստագետը, «Սովետական արվեստ», Երևան, 1940, № 8, էջ 74:
2. **Մարտիկյան Ե.,** Ստեփան Աղաջանյան, Երևան, 1956, էջ 175:
3. Ժուլիենի Ակադեմիան գեղանկարչության և քանդակագործության մասնավոր դպրոց էր: Հիմնադրվել էր 1867-1868 թվականներին Փարիզում՝ ֆրանսիացի գեղանկարիչ և մանկավարժ Ռոդոլֆ Ժուլիենի (1839-1907) կողմից: Տե՛ս **Джон Ревалд,** Постимпрессионизм, Ленинград, 1962, стр.168 -191.
4. **Շիշմանյան Ռ.,** Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 139:
5. **Սարգսյան Է.,** Աղաջանյանի հետ, «Սովետական արվեստ», Երևան, 1963, № 12, էջ 16:
6. 19-րդ դարի 30-60-ական թվականներին ֆրանսիացի ռեալիստ բնանկարիչների խումբ, որոնք ստեղծագործել են Ֆոնտենեբլո անտառի մոտակայքում գտնվող Բարբիզոն (ֆր. Barbizon) գյուղում, որից էլ խումբը ստացել է «բարբիզոնցիներ» անունը: Հայտնի ներկայացուցիչներն են՝ Թեոդոր Ռուսոն (1812-1867), Ժյուլ Դյուպրեն (1811-1889), Նարսիս Վիրժիլ Դիասը (1807-1876), Ժան Ֆրանսուա Միլլեն (1814-1875), Շառլ-Ֆրանսուա Դոբինյին (1817-1878) և ուրիշներ: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 311-312: **Яворская Н.,** Пейзаж Барбизонской школы, Москва, 1962, стр. 233-239.
7. Ժան Դեզիրե Գյուստավ Կուրբե (1819-1877), 19-րդ դարի ֆրանսիական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1976, էջ 27-28: **Яворская Н.** Западноевропейское искусство XIX века, Москва, 1962, стр. 42-46. Мастера искусства об искусстве, том 4, Москва, 1967, стр. 238-242. **Тихимиров А.** Гюстав Курбе, Москва, 1948, стр. 3-43.
8. **Դրամբյան Ռ.**, Ռեալիստ նկարիչը, «Սովետական արվեստ», Երևան, 1963, № 12, էջ 14: **Մարտիկյան Ե.,** նշվ. աշխ., էջ 43:
9. Ստեփան Աղաջանյան. 150, /ալբոմ/, Երևան, 2013, էջ 9:
10. «Խրճիթը լեռներում» (1874, 33 x 49, կտ., յուղ., Պուշկինի անվան կերպարվեստի թանգարան, Մոսկվա, Ռուսաստան), «Ծովափ Նորմանդիայում» (1867, 103 x 126, կտ., յուղ., Պուշկինի անվան կերպարվեստի թանգարան, Մոսկվա Ռուսաստան), «Ալեկոծ ծով» (1870, 71 x 103, կտ., յուղ., Օռլեանի կերպարվեստի թանգարան, Ֆրանսիա), «Ալեկոծ ծով» (1870, 117 x 160,5, Օրսեյի թանգարան, Փարիզ, Ֆրանսիա), «Ծովափ. Մայրամուտ» (1867, 54,9 x 65,4, կտ., յուղ., Անհատական հավաքածու):
11. **Դրամբյան Ռ.,** նշվ. հոդվածը, էջ 14:
12. **Մարտիկյան Ե.,** նշվ. աշխ., էջ 74:
13. Տե՛ս նույն տեղում, էջ 75, 98-99:
14. Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ /գրացուցակ/, ՀԱՊ, Երևան, 1963, էջ 13:
15. Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, Москва, 1951, стр. 14.
16. Ստեփան Աղաջանյան. 150, /ալբոմ/, էջ 100, 103:
17. Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ, էջ 13:
18. Տվյալ բնապատկերները այս կատալոգում հանդես են գալիս հետևյալ անվանումներով՝ «Ессентуки. Пейзаж с домами», «Ессентуки. Пейзаж»,

տե՛ս Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, стр. 15.

19. Երևանը բնանկարներում, Կերպարվեստի հավաքածու, մաս 1, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2008, էջ 12:
20. **Մարտիկյան Ե.,** նշվ. աշխ., էջ 123: **Շիշմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 148: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ, էջ 14: Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ /գրացուցակ/, 40-ամյա ստեղծագործության առթիվ, Երևան, 1938, էջ 24: Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, стр. 16.
21. **Շիշմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 148:
22. **Մարտիկյան Ե.,** նշվ. աշխ., էջ 129:
23. Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյան, էջ 25:
24. **Շիշմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 148:
25. Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյան, էջ 24: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ, էջ 14:
26. Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, стр. 18.
27. Երևանը բնանկարներում, Կերպարվեստի հավաքածու, մաս 1, էջ 11:
28. Ստեփան Աղաջանյան. 150, /ալբոմ/, էջ 36: Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, стр. 16. Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ, էջ 14: Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյան, էջ 24: **Շիշմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 150:
29. Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյան, էջ 25:
30. **Վրթանես Ախիկյան** (1872-1936), **Սեդրակ Առաքելյան** (1884-1942), **Հմայակ Արծաթպանյան** (1874-1919), **Գևորգ Բաշինջաղյան** (1857-1925), **Գաբրիել Գյուրջյան** (1892-1987), **Խաչատուր Եսայան** (1909-1977), **Եղիշե Թադևոսյան** (1870-1936), **Փանոս Թերլեմեզյան** (1865-1941), **Հմայակ Հակոբյան** (1871-1939), **Էմանուել Մահտեսյան** (1857-1908), **Ռաֆայել Շիշմանյան** (1885-1959), **Մարտիրոս Սարյան** (1880-1972) և այլ անվանի հայ գեղանկարիչներ:
31. **Կիրակոսյան Մ.,** Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2014, էջ 108:
32. Ստեփան Աղաջանյան. 150, /ալբոմ/, էջ 95:
33. **Շիշմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 149: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ, էջ 14: Արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Աղաջանյան, էջ 25: Народный художник Армянской ССР С. М. Агаджанян, каталог выставки, стр. 16.
34. **Մարտիկյան Ե.**, նշվ. աշխ., էջ 123:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Բնանկարը Ստեփան Աղաջանյանի արվեստում
Մարի Աբրահամյան

Ստեփան Աղաջանյանը XIX-րդ դարավերջի և XX դարի առաջին կեսի հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչներից է: Մեծ է նկարչի ներդրումը հայ ռեալիստական դիմանկարչության զարգացման գործում:

Թեև Ս. Աղաջանյանը հայ գեղանկարչության մեջ նշանավորվեց որպես հայ իրա-

պաշտական դիմանկարչության խոշոր վարպետ, այդուհանդերձ նրա արվեստում իրենց ուրույն տեղն են գրավում նաև բնանկարները:

Հոդվածում, ըստ ժամանակագրության, ներկայացվել և վերլուծվել է նկարչի ստեղծագործական բոլոր շրջաններից ներառված բնանկարները՝ «Ծովափնյա տեսարան, Բրետան» (1897-1899), «Բուլոնյան անտառ» (1897-1899), «Ղարաբաղյան տեսարան» (1900), «Կտուրներ. Նոր Նախիջևան» (1914, 1912-1916), «Ձմեռային բնանկարը» (1927), «Արարատը և Արարատյան դաշտը» (1927) և այլն: Կատարվել են որոշ աշխատանքների թվագրման հետ կապված ճշգրտումներ:

РЕЗЮМЕ
Пейзаж в искусстве Степана Агаджаняна
Мари Абрамян

Ключевые слова: Степан Агаджанян, пейзаж, темный колорит, пространственные образы, красно-коричневый, оттенок, сочетание разных цветов, цветовая текстура.

Степан Агаджанян – один из видных представителей армянской живописи конца 19 - первой половины 20 века. Он внес большой вклад в развитие армянского реалистического портрета.

Степан Агаджанян известен как крупный мастер реалистического портрета в армянской живописи, но в его искусстве особое место занимают также пейзажи.

В данной статье изучены и проанализированы все пейзажи художника, созданные в разные периоды его творчества («Вид на побережье. Бретани» (1897-1899), «Булонский лес» (1897-1899), «Карабахский пейзаж» (1900), «Крыши. Новый Нахичеван» (1914, 1912-1916), «Зимний пейзаж» (1927), «Арарат и Араратская долина» (1927) и т.д.); уточнена датировка некоторых работ.

SUMMARY
Landscape in The Art of Stepan Aghadjanyan
Mari Abrahamyan

Keywords: Stepan Aghadjanyan, landscape, dark color, spatial images, red-brown, hue, combination of different colors, color texture.

Stepan Aghadjanyan is one of the prominent representatives of Armenian painting of the late 19th - first half of the 20th century. He made a great contribution to the development of the Armenian realistic portrait.

Although S. Aghadjanyan is known as a great master of realistic portrait in Armenian art, landscapes also occupy a special place in his art.

In this article all the landscapes created in different artistic periods are considered and analyzed: ("View of the coast. Brittany" (1897-1899), "Bois de Boulogne" (1897-1899), "Karabakh landscape" (1900), "Roofs. New Nakhichevan" (1914, 1912-1916), "Winter landscape" (1927), "Ararat and the Ararat valley" (1927) etc.). The creation dates of some works are also clarified in this article.